ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆ. ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՉՔԵՐՈՎ

Mélinée Manouchian

MANOUCHIAN

Témoignage suivi de
poèmes, lettres et documents inédits

Մելինե Մանուշյան

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆ. ԱԿԱՆԱՏԵՍԻ ԱՉՔԵՐՈՎ

Անտիպ պոեզիա, նամականի, արխիվ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Լիլիթ Բլեյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 93/94:82-94
ԳՄԴ 63.3+84
Մ 286

Մանուշյան Մելինե
Մ 286 Միսաք Մանուշյան. ականատեսի աչքերով: Անտիպ պոեզիա, նամականի, արխիվ / Մ. Մանուշյան.- Եր.: Newmag, 2024.- 340 էջ:

1944-ի փետրվարի 21-ին Փարիզից ոչ հեռու գտնվող Մոն Վալերիեն ամրոցում նացիստները գնդակահարեցին ֆրանսիական Դիմադրության շարժման 22 անդամների: Նրանք պատմության մեջ մնացին որպես «Մանուշյանի խումբ»: Միսաք Մանուշյանի կնոջ ու պայքարի ընկերոջ՝ Մելինեի այս հուշագրությունը խիստ անձնական վկայություն է: Գրքում նկարագրված շատ դեպքեր և մանրամասներ ուրիշ ոչ ոք չէր կարող պատմել նման ճշգրտությամբ ու զգացմունքայնությամբ: Գրքում կան փաստաթղթեր ու նամակներ (որոշները՝ երբեք չհրապարակված), որոնք օգնում են նոր լույսի տակ տեսնել Մանուշյանին: Գիրքն օգնում է պատկերացնել «հայկական դիմադրությունը» ֆրանսիական շարժման ներսում՝ դրա արմատները, հոգեբանական ու մարդկային առանձնահատկությունները:

ՀՏԴ 93/94:82-94
ԳՄԴ 63.3+84

ԳՐՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ՝
«Ազնավուր» հիմնադրամ
aznavourfoundation.org

ISBN 978-9939-884-84-4
copyright © 2023, Katia Guiragossian
Մելինե Մանուշյան, «Միսաք Մանուշյան. ականատեսի աչքերով» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Իրավունքները ձեռք են բերվել հեղինակների ժառանգների հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԹԱԳՆՈՒՄ. Կատյա Կիրակոսյան 7

Մելինե Մանուշյան 13

ՄԱՆՈՒՇՅԱՆ 19

Նախաբան 21

Մեր առաջին հանդիպումը 25

Ո՞վ էի ես 31

Ո՞վ էր Մանուշյանը 39

Մեր առօրյան 47

Քաղաքական պայքարները 57

Սանտեից մինչև ռազմաճակատ 65

Օկուպացիան 71

«Գնոմ է ռոն» գործարանում 75

Կոմպիեն 79

Զենքը ձեռքին 87

Պարտիզանն ի՞նչ է 91

Հայերը և Դիմադրությունը 93

Կեցցե՛ Դիմադրությունը 95

Կասկածները 103

Մի վերջին օր, մի վերջին գիշեր... 107

Սպասում 113

Ամեն մեկին՝ իր բանտը 117

Ազնավուրյանների տանը 121

Երեք քույրերի մոտ 123

Լաս՝ հուր աղջիկ 127

Եվ նորից՝ հայերի ձերբակալություններ 131

Եվ նորից՝ Ազնավուրյանների տանը 135

Ես իմացա... 137

«Նրանք քսաներեքն էին» 139

Երկուսից հանած մեկ ... 149
Մանուշյանի ներկայությունը ... 151
Եզրահանգում... Որ երբեք ոչինչ չի հանգում ... 155

ՄԱՆՈՒՇՅԱՆ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 160
Մեր գաղտնի, հայրենազուրկ եղբայրները ... 172
Մանուշյան պոետը ... 183
Մանուշյան եղբայրները բացահայտում են բանվորական աշխարհը ... 195
Լաերտ Վաղարշյան. մի ֆիլմի պատմություն ... 201
Արման Գատի, «Կարմիր ազդը». տասներեք տարվա ստեղծագործական երթ ... 207
Ֆրանկ Կասենտի. առաջին ֆիլմը ... 216
Լուիզա Ասլանյան, Օլգա Բանչիկ. երկու ճակատագիր ... 233
Մանուշյան, Սեմա, Պետիկյան ... 243
Լեո Ֆերե և Լուի Արագոն ... 257
Սիմոնա Սինյորեն՝ Մելինեին ... 259
Մելինե Մանուշյան. նամակ՝ Լուի Արագոնին ... 260
«Ձեր անունները՝ դժվար արտասանվող» ... 266
Միհրան Մազլեմյան. որպես ընկեր և Դիմադրության մարտիկ ... 268
Մանուշյանի առօրյա գրառումներից ... 277
Միսաք Մանուշյան. կենսագրություն ... 289
Նամակ՝ Արմեն Կիրակոսյանին ... 306
Իվրի-սյուր-Սենի գերեզմանատանը ... 309
Մոն Վալերիենում հիմա Պասկալ Կոնվերի զանգն է ... 317

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ... 329
Գրքում օգտագործված նյութեր, աղբյուրներ ... 336
Շնորհակալություն գրքի ստեղծմանն աջակցած կառույցներին և անձանց ... 336

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԹԱԳՆՈՒՄ

Կատյա Կիրակոսյան

Երբ փոքր էի, իմ Արմեն տատն ինձ իր հիշողություններն էր պատմում: Պատմում էր անցուդարձն այն մարդկանց, որոնք իր առօրյայի մասն էին, և որոնց համար ինքը ոգևորված աշխատում էր, կերակրում էր քաջերին: Նա ինձ պատմում էր, թե ինչպես են Շառլ Ազնավուրի ծնողները՝ Քնար և Միշա Ազնավուրյանները, թաքցրել Մելինեին, երբ նա հետախուզման մեջ էր, բացատրում էր ինձ, թե ինչից է առաջացել Մելինե մորաքրոջ այժմյան կլաուստրաֆոբիան... Պատմում էր իր արտասովոր պատմություններն ու հիշողությունները:

Մորաքույր Մելինեն ինձ վրա վառ տպավորություն է թողել: Մի օր, երբ ընտանիքով միասին էինք, ինձ կանչեց մոտն ու ասաց. «Քեզ մի գաղտնիք կվստահեմ: Բայց տես, հա՛, շատ կարևոր գաղտնիք է: Երբեք չպիտի բացահայտես: Չի կարելի տվածդ խոսքը զանց առնել»: Ես շատ վախեցա: Վախեցա՝ բարձրության վրա չլինեմ: Վախից քար էի կտրել: Եվ ահա նա շշնջաց գաղտնիքն իմ ականջին: Ես տեղիցս թռա, անցա սենյակի միջով ու երբ նորից մոտեցա իմ աթոռին, արդեն լրիվ մոռացել էի, թե ինչ էր նա ինձ շշնջացել: Եվ հենց այս մոռացումն էր, որ ինձ՝ երեխայիս, օգնեց գտնել իմ ընթացքը: Իմ դեպքում, ստացվում է, հիշելը սկսվում է հիշողության մթագնումից հետո:

Մ՚իշտ ունեցել եմ զգացողություն, որ այդ պահն ինձ համար առանցքային է եղել՝ ընտանիքիս պատմությունն ըմբռնելու համար: Կարծում եմ՝ նախասկզբնականը ոչ թե ինքնին գաղտնիքն էր, այլ ազդեցությունը, որ ինձ վրա ունեցավ, էստաֆետի այդ փոխանցումը, շարունակությունը, որ դրանից բխեց: Որպես ընտանեկան արխիվները տնօրինող՝ ես միշտ եղել եմ տաճարի պահապանի պես մեկը՝ ցանկանալով միաժամանակ պաշտպանել ու տարածել մշակութային այդ ժառանգությունը:

Բայց այսօր կարևորը Միսաք Մանուշյանի անհատականության վրա լույս սփռելն է՝ որբի, պոետի, աշխատավորի, նվիրյալ մարտիկի: Պետք է արժանին մատուցել նրանց, ովքեր կարողացան մի աներևակայելի ուժ կուտակել, ձեռքերը խրել մինչև Պանդորայի տուփի ամենահատակը ու

այնտեղից մի խելահեղ հույս քամելով՝ կառչել դրանից և դիմանալ ու դիմադրել՝ անկախ ամեն ինչից:

Մելինեի պատմությունն այս առումով առաջնային կարևորություն ունի: Նա առաջին և ամենամտերիմ ականատեսն է, որն ինքն էլ, այլ կանանց հետ միասին, մեծ ներդրում ունի ազատության համար այդ պայքարում:

Միսաքը կամ Մանուշը, ինչպես նրան անվանում էին իմ տատիկ Արմենն ու մորաքույր Մելինեն, հաճախ էր կրկնում. «Կյանքի արժեքը նրա տևողության մեջ չէ, այլ օգտավետության»: Իրապես, Միսաքի և իր ընկերների համար կյանքի արժեքը տևողության մեջ չէր: Փոխարենը մենք այսօր ամեն օր խոնարհվում ենք այն ստեղծագործության առջև, որ նրանք կերտեցին իրենց սեփական կյանքերից:

Գործելու համար նրանք ատելությամբ սնվելու կարիքը չունեին: Նրանց սնունդը սերն էր. որքան մարդկային, նույնքան էլ՝ արտասովոր: Ցանկանում եմ խոսել հենց այդ սիրո մասին, որ ներծծված էր կյանքի մի հզոր, բացառիկ ուժով, որից բխում էր քաջությունը բոլոր նրանց, ովքեր թեև շատ ջահել և իդեալիստ էին, սակայն զգացին հիվանդ հասարակության զարկերակը և, աշխարհում մոլեգնող խելահեղությանն ընդդիմանալով, կարողացան կանգուն մնալ՝ իրենց արժեքներին հավատարիմ, որքան էլ բարձր լիներ դրա գինը: Նրանց ճակատագիրը ծանր էր, նրանց ներդրումն ավելի լավ աշխարհ ունենալու գործում՝ անգնահատելի: Այդ քաջ ու խիզախ օտարականները թշնամու դեմ ելան սիրով, համոզմունքով, հավատով: Հավատ՝ կյանքի իրենց իդեալի հանդեպ, հավատ՝ մարդու հանդեպ, հավատ՝ խաղաղ ու միասնական ապագայի հանդեպ, նույնիսկ եթե այդ ապագան առանց իրենց էր գրվելու: Ամեն ինչ ասված է Լուի Արագոնի «Հիշատակի տողեր» պոեմի վերջին տան տողերում.

Քսան և երեք հոգի, որոնց խոցեց գնդակը,
Քսան և երեք հոգի անժամանակ մեռան,
Քսաներեք օտարներ, մեզ եղբայրներ սակայն,
Քսաներեք սիրահար, որ պաշտում էին կյանքը,
Որ Ֆրանսիա գոչելով՝ կռվեցին և ընկան[1]*:*

[1] Թարգմանությունը՝ Պերճ Թյուրաբյանի («Կարմիր ազդը», երգային տարբերակ) (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Համեստ ու միաժամանակ հերոսական այդ կերպարները կարճ և արժեքավոր կյանք ունեցան: Նրանց պատմությունները եզակի են ու միաժամանակ ընդհանրական՝ բոլորի համար: Ներկայացվող գիրքը և անտիպ փաստաթղթերը, որոնք այստեղ մեջբերվում են, բարձրացնում են շղարշն այդ կյանքերից մեկի վրայից և նրա միջոցով մեզ պատմում ջահել հոգիների մասին, որոնք ամբողջապես գիտակցում էին իրենց գործողության կարևորությունը, ոչ միայն հենց իրենց, այլև գալիք սերունդների և ամբողջ մարդկության համար:

Հարգանքի տուրք մատուցել Միսաքին նշանակում է բաց աչքերով նայել բոլոր իրադարձություններին, որոնք տեղի են ունենում բոլոր ժամանակներում ու վայրերում, նաև սթափ դիտարկել այն հասարակությունը, որն այսօր ենք կառուցում, և որը երբեմն մեզ ստիպում է մտածել, թե ապրում ենք մի դիստոպիայի մեջ՝ անիրական ու մղձավանջային: Այսօր դեպքերի դաժան ընթացքը մեզ ցույց է տալիս, որ դեռևս ոչնչի չենք հասել: Մենք պիտի հնարավորին չափ զգոն լինենք, համերաշխ և խիզախ, քանի որ Ժան Ժորեսի խոսքերը դեռ արդիական են.

«Երբ սուլթանը տեսնում է, որ Եվրոպային պատած ինքնագոհ թմբիրի շնորհիվ երեք տարվա ընթացքում կարողացել է անպատիժ կերպով իրականացնել կոտորածներ, որոնք մարդկության վերջին հարյուրամյակների ընթացքում թերևս նմանը չեն ունեցել, երբ տեսնում է, որ Եվրոպան առաջին ցնցումից հետո գլուխը բարձրացնելով իր ուշացած արթնության մեջ ոչ թե շրջվում է դեպի սուլթանի զոհերը՝ նրանց վերքերն ամոքելու, ոչ թե շրջվում է դեպի ճնշված ժողովուրդները՝ նրանց օգնելու, որ նվաճեն իրենց անկախությունը, այլ առաջին իսկ քաղաքական քայլերով դառնում է նրա (սուլթանի՝ թարգմ.) շահերի ծառան, այդժամ նա ասում է ինքն իրեն, որ Եվրոպան իր ձեռքերում է, և ինքը կարող է իր հայեցողությամբ խաղալ նրա հետ (հատված՝ Պատգամավորների պալատում ունեցած ելույթից, 22 փետրվարի, 1897 թ.)»:

Հարգանքի տուրք մատուցել Միսաքի հիշատակին նշանակում է հոգու ամենախորքում գիտակցել, որ ո՛չ ճանապարհը և ո՛չ արդյունքը չեն կարող գոյություն ունենալ, եթե մենք միասին ճակատ չկազմենք, ինչպիսին էլ լինեն վտանգները, զոհաբերությունները և հրաժարումները: Մենք պիտի շարունակ հիշենք այն, ինչը մեզ սովորեցրել է Պատմությունը, ու ինչը

կտակել են այս Մարդիկ: Խայտառակությունը չպիտի կարողանա անվերջ վերարտադրվել, հակառակ պարագայում մեր աշխարհը դատապարտված է խելահեղության:

Հարգանքի տուրք մատուցել նրան նշանակում է այսօր և ընդմիշտ պահպանել նրա կերպարը՝ որպես անհաղթ մեկինը: 80 տարի առաջ՝ 1944 թ. փետրվարի 21-ին, Միսաք Մանուշյանը, որը կոմունիստական Դիմադրության Ազատ հրաձիգներ և պարտիզաններ-Ներգաղթյալների աշխատավորական ուժ կառույցի (ԱՀՊ-ՆԱՈՒ)[2] Փարիզի շրջանի ռազմական թևի ղեկավարներից էր, իր զինակիցների հետ գնդակահարվեց Մոն Վալերիենում: Նացիստական քարոզչամիջոցները նրա դիմանկարն օգտագործել էին իրենց՝ «Քրեական բանակ» կոչվող տեղեկատվական արշավի համար՝ ստեղծելով արյան գույնի մի պաստառ՝ հայտնի «Կարմիր ազդը»:

Փարիզի ոստիկանության ընդհանուր հետախուզական հատուկ բրիգադների օգնությամբ նացիստները կարողացան ջախջախել «Մանուշյանի խումբը», որը մի քանի տարի շարունակ հարվածներ էր հասցնում օկուպացիոն զորքերին՝ խիստ արդյունավետ քաղաքային պարտիզանական պայքարով: 1944 թ. փետրվարի 15-18-ը՝ Կաստիլիոնե փողոցի վրայի «Կոնտինենտալ» հյուրանոցում կազմակերպված դատավարություն կոչվող խեղկատակության ժամանակ, կոլաբորացիոնիստների մամուլի դեմքին Միսաքը նետեց. «Դուք ժառանգել եք Ֆրանսիայի քաղաքացիությունը, իսկ մենք դրան արժանացել ենք»: Մինչդեռ պետությունը մերժել էր քաղաքացիության՝ նրա երկու դիմումները: Նրան գնդակահարեցին դատավարությունից մի քանի օր անց: Նա 37 տարեկան էր:

Մեր գոյության ընթացքում մենք բացահայտում ենք, ճանաչում բազմաթիվ անհատների, խաչվում տարբեր ճակատագրերի, տարբեր ճանապարհների հետ: Երբեմն, իհարկե՝ հազվադեպ, նրանցից որոշները մեզ իրոք գրավում են, հիացնում, հուզում: Միսաք Մանուշյանը՝ իմ մեծ մորեղբայրը, նրանցից մեկն էր: Մելինեի և իմ տատ Արմենի պատմությունների շնորհիվ, որոնք հմայված լսում էի, ես մեծացա Միսաքի ընկերակցությամբ: Նրա, ում հյուսած կապերը հեշտությամբ ճանապարհ են բացել՝ հասնելով մեզ, այնքան ամուր կապեր, որ մենք կարող ենք դրան-

[2] Ֆրանսիական Դիմադրության ռազմական կառույցի՝ հիմնականում օտարազգի ներգաղթյալներից բաղկացած ստորաբաժանումն էր (ֆրանսերեն հապավումը՝ FTP-MOI): Մանուշյանի խումբը գործում էր այս ստորաբաժանման կազմում (Ծանոթագրությունը՝ հեղինակի):

ցից կառչել մինչև մատների պոկվելը: Իր մահապատժից առաջ Միսաքը երկու նամակ է գրել, մեկը՝ Մելինեին (որը Լուի Արագոնի և մյուսների համար ոգեշնչման աղբյուր կդառնա), մյուսը՝ իմ մեծ մայր Արմենին. «Երկու ժամից ես էլ չեմ լինի այս աշխարհում: [...] Ոչ ոք թող լաց չլինի վրաս...»: Ինչ վերաբերում է ինձ, ապա նրա խորհրդանշական կերպարից զատ՝ ես հիանում էի նրանով, ինչպես հիանում եմ իմ «մանկության դիցաբանական» էակներով: Նրա հավատը, ուղղամտությունն ու ազատությունն ինձ վրա խոր հետք են թողել: ՄՄ-ն՝ Միսաքը և Մելինեն՝ իմ անհասանելի սերերը, ինձ ուղեկցել են որպես երկու անտեսանելի, բայց արիասիրտ ուսուցիչներ: Պատկերացրեք միայն. երկու որբեր՝ հայրենազուրկ, Հայոց ցեղասպանությունից փրկված, հազիվ Ֆրանսիա գալով, հանդիպում են ամենակեղտոտ ծայրահեղականության աճին ու բախվում նոր ցեղասպանության հենց իրենց հյուրընկալող երկրի սրտում, որն իրենց համար բացել էր իր թևերը, ու որի հանդեպ իրենք մի անվերջ երախտագիտություն էին տածում: Ակնհայտ էր, որ այդ երկուսը թույլ չէին տալու, որ խավարն անարգել տիրանա իրենց այդքա՜ն փայփայած այս հայրենիքին:

Միսաքը մարմնավորում է այդ բոլոր «դժվար անուն ունեցող» օտարականների պայքարը: Նրա արածն առավել նշանակալի էր այն պատճառով, որ հենց իր ներսում միշտ մի կատաղի պայքար էր ընթանում: Մեկ այլ մարդկային էակի կյանքից զրկելը, նույնիսկ ամենավատթար թշնամուն, նրա համար մի թեթև գործողություն չէր: Միսաքն ամբողջական էր ու բարդ, մարզիկ էր և մտավորական, մարտիկ ու պոետ, ակտիվիստ և սահմանները փոխող, ազատ մարդ: Երբ մահապատժից մի քանի ժամ առաջ գրում էր «ես որևէ ատելություն չունեմ գերմանացի ժողովրդի հանդեպ», գիտեր, որ մահը վրա է հասնում հաղթանակից և նպատակից ընդամենը երկու քայլ հեռավորության վրա: Նա գիտեր Գերմանիայի հանցակցությունն իր ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցած ողբերգությանը: Այդ ֆրազը հատկապես ուժեղ է նրա ապրած կյանքի համատեքստում: Նա բացառիկ մի երևույթ էր և է՛, ինչպես ասում էր Մելինեն. «Մանուշը սիրում էր միայն մի բացառիկ կերպով, նրա բոլոր զգացմունքները, բոլոր կրքերը բացառիկ էին: Նա կարողանում էր միաժամանակ անցնել չափերն ու մտածված գործել: Դա՛ ենք մենք տեսնում, երբ փորձում ենք նրան որսալ իր ամենասկզբնական փուլում»: Նրա կյանքը մի հավերժական պայքար էր, «պայքար՝ հանուն իր սեփական արժանապատվության

և ուրեմն՝ բոլոր մարդկանց արժանապատվության»: Դա մի ծանր բեռ էր նրա համար, որի սևաթույր աչքերը նման էին մի գիշերվա, որի մեջ գալիքի արևն էր ապրում:

Միսաքն ու Մելինեն լեգենդար զույգ էին, և թեպետ նրանց ուղեծիրը ողբերգական եղավ, նրանց պատմությունը ես երբեք ծանր չէի տանում. հենց նրանց պատմությունն է ինձ միշտ առաջ տարել: Ես երբեք չեմ ունեցել այն զգացողությունը, թե մեծանում եմ այդ արտասովոր անհատականությունների ստվերում: Ճիշտ հակառակը, ես նետվել եմ կյանքի մեջ՝ ողողված նրանց լույսով՝ այն ուժով ու էներգիայով, որոնց համար ամբողջապես նրանց եմ պարտական: Նրանց օրինակը միշտ առանձնահատուկ թանկ է եղել ինձ համար, նրանց ընտանիքի համար: Կցանկանայի այսօր փոխանցել նրանց անգին ժառանգությունը՝ հարգանքը, սովորելու կիրքը, սեփական ճշմարտությունն ու սիրո հետևից գնալու խիզախությունը: Սեր՝ կյանքի հանդեպ, բառերի հանդեպ, հողի և արժեքների հանդեպ... Թեև Միսաքն ու Մելինեն ժառանգ չեն թողել, նրանք, համոզված եմ, ունեն բազմաթիվ ժառանգորդներ: Նրանք իրենց մեջ կրում են սրբազան կրակը, հավերժական բոցը Դիմադրության Երևանում, Ծիծեռնակաբերդի գագաթին թառած՝ ճիշտ Արարատի հայացքի դիմաց: Եթե ճիշտ են ասում, որ հանգամանքներն են ստեղծում մարդուն, ապա Միսաքն ու իր ընկերները կարողացել են բացառիկ ներդրում ունենալ մարդկության առաջընթացում, և դա է արտացոլված Միսաքի այս տողերում. «Հոգիս կըզգայ մեղուն դառնալ բնութեան մէջ անանձնական, ծաղիկներուն մեղրը ծրծել և զայն հաւետ տալ մարդկութեան»:

ՄԵԼԻՆԵ ՄԱՆՈՒՇՅԱՆ

Ծնվել է Կոստանդնուպոլսում (Ստամբուլում) 1913 թ. նոյեմբերի 13-ին Ասատուր Սուքեմյանի և Զարուհի Քլիջյանի ընտանիքում: Հայրը, որ Օսմանյան փոստատան բարձրաստիճան ծառայող էր, սպանվում է Հայոց ցեղասպանության ժամանակ: Մայրը Մելինեին՝ չարաճճի շիկահեր փոքրիկին, որի անունը հարևան թուրքերը «Մոսկով» էին կնքել, և նրա ավագ քույր Արմենուհուն, որին Արմեն էին կանչում, պատսպարում է ամերիկյան մի հաստատությունում՝ մոտակա Ադաբազար քաղաքում: 1922 թվականին՝ քեմալական ուժերի հարձակումներից հետո, երեխաներին տեղափոխում են Կորնթոս՝ Հունաստան, Մերձավոր Արևելքի օգնության կազմակերպության (Near East Relief)[3] աջակցությամբ: Կյանքը որբանոցում շատ ծանր էր, փոքրիկ Մելինեն հազիվ է փրկվում մահից: 1926-ին որբանոցի երեխաներին ցրում են տարբեր ուղղություններով, քույրերին ուղարկում են Ֆրանսիա՝ ազգանվան փոխարեն սխալմամբ գրելով հոր՝ Ասատուրի անունը. Ասատուրյան: Նրանք մենակ են, հայրենազուրկ: Սկզբում հանգրվանում են Մարսելի Դպրոցասեր հայկական վարժարանում, որը 1929 թ. տեղափոխվում է Փարիզ: Արդարության ձգտմամբ տարված, անկախ, կանանց էմանսիպացիայի հարցերով ոգեշնչված Մելինեն, սակայն, ստիպված էր սահմանափակել սովորելու ցանկությունը նյութական ծանր վիճակի պատճառով և սկսեց մեքենագրության դասեր առնել Պիժիե դպրոցում: Ընդունվեց ՀՕԿ՝ Հայաստանի օգնության կոմիտեի Բելվիլի մասնաճյուղ, ներգրավվեց կազմակերպության աշխատանքում, 1934-ին հանդիպեց Մանուշյանին: «Մեր որբուկները», ինչպես զույգին քնքշորեն անվանում էին նրանց մտերիմ բարեկամ Ազնավուրյանները, ամուսնացան 1936-ին: Բնակվում էին Փարիզում՝ ներգրավվելով կոմունիստական կուսակցության քաղաքական գործունեության մեջ, մաս կազմելով Ժողովրդական ճակատին, իսպանացի հանրապետականների աջակցության կոմիտեին, հակաֆաշիստական պայքարին: Արվեստի, թատրոնի,

[3] Ամերիկյան կազմակերպություն, որը ստեղծվել է 1915 թ. Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունից հետո, աջակցություն էր հասցնում վայրագություններից տուժած հայերին, հույներին և ասորիներին:



երաժշտության ու գրականության կրքոտ սիրահարներ էին, սակայն սպառնալիքն օդում խտանում էր, և նրանք հասկանում են, որ պատերազմը շուտով կպայթի:

Պատերազմի ընթացքում Մելինեն մասնակցում է Դիմադրությանը, գործարանում աշխատելուն կամ հաշվապահի պարտականություններին զուգահեռ՝ տպագրում է թռուցիկներ, ցրում դրանք, պաստառներ սոսնձում: Հաճախ գործում էր մտերիմ ընկերուհու՝ Լուիզա Ասլանյանի հետ (որպես գրող հայտնի է Լաս կեղծանունով): Նրանք երկուսով հաղթահարում էին օկուպացված Փարիզի բոլոր վտանգները:

Միսաքը և Մելինեն իրենց բուռն սիրո շրջանում ամբողջապես նվիրվում են Դիմադրությանը, նրանց կյանքը դառնում է ամենօրյա պայքար: Մշտապես նրանց կողքին է Արմենը՝ Մելինեի քույրը, որը դերձակ էր դարձել և օրուգիշեր աշխատում էր՝ նյութական օգնություն ու սնունդ հասցնելով Դիմադրության մարտիկներին, իր տանը թաքցնելով վտանգի տակ գտնվողներին:

1943 թ. նոյեմբերին Միսաք Մանուշյանի և նրա ընկերների ձերբակալությունից հետո գեստապոն հետախուզում էր հայտարարել նաև Մելինեի հանդեպ՝ նրան մահվան դատապարտելու նպատակով: Մելինեն ստիպված էր թաքնվել՝ երկար ամիսների ընթացքում մնալով մեկուսացման մեջ, օգնություն ստանալով Ազնավուրի ընտանիքի անդամներից, որոնք ակտիվորեն մասնակցում էին Դիմադրությանը Նավարեն փողոցի իրենց փոքրիկ բնակարանից: Չնայած խորագույն ընկճախտին, որը հաջորդում է Միսաքի և ընկերների մահապատժի մասին ուշացած տեղեկությանը (մտերիմները խնամքով թաքցնում էին բոթը), Մելինե Մանուշյանն իր գաղտնի ապաստարանից շարունակում է հոդվածներ գրել «Լիբերտե» գաղտնի պարբերականի համար կամ էլ տեքստեր, որոնք այնուհետև ուղարկվում էին Ալժիրի կառավարություն. այդ շրջանում նա գրում էր Ժակլին Ալբերտինի անվան տակ:

1945-ին, հավատարիմ մնալով ընկերների հետ 1944-ին գնդակահարված ամուսնու նամակում արտահայտված վերջին կամքին, նա մեկնում է Հայաստան՝ իր հետ տանելով Միսաքի գրվածքները, բանաստեղծությունները ու արխիվը, առնվազն՝ այն ամենը, ինչ գեստապոն չէր հասցրել խլել: Տեղի իշխանությունները նրան այլևս թույլ չեն տալիս վերադառնալ՝ մերժելով ելքի վիզան: 1946-ին Հայաստանի գրողների միությունը

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark